ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ~~թիվ~~ ՀՕ- 148 օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ ~~հոդված~~ 7-րդ ~~ի~~ հոդվածի 1-ին, ~~հոդված~~ 51-րդ հոդվածի ~~ի~~ 1-ին և ~~հոդված~~ 56-րդ հոդվածի 3-րդ մասերում «տեխնիկական կանոնակարգեր» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «տեխնիկական կանոնակարգեր և նորմատիվ իրավական այլ ակտեր» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

**Հոդված 2.** Օրենքի ~~հոդված~~ 59-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: